

բացին Ս. Յարութեան դուռը և թող տուին կատարել Ջատիկը: Այս ժամանակ Ս. Յարութեան գրան առջև, գետնին վրայ բեռեցին շատ մը բեռներ, ի նշան այս հրաշքին, որ կան մինչև այսօր: Այս արգելքը իսլամաց կողմէն դրուած էր հրեաներու թելագրութեամբ. այդ պատճառաւ այս գէպքէն յետոյ այս վերջիններուն արգիլուեցաւ Ս. Յարութեան դուռնէն անցնիլ. ահա ասոր համար է որ քարայ փորուածոյ շուներու պակերներ շինուած էին աստղաբաշխ արհեսագործութեամբ. երբ Ս. Յարութեան դուռնէն հրեայ մը անցնէր, իբր բողոք կը հաչէին նոյն քարեայ շուները եւ կ'իմացնէին քրիստոնեաներուն: Սակայն իսլամական տիրապետութեան ժամանակ կոտրատեցին այդ քարեայ շուներուն քանդակուած պատկերները, որոնց հետքերը կ'երևին հիւսիս-արեւելեան կողմը, Ղըպտիներու եկեղեցիին գրան վրայ (Հան. էջ 211-213):

Ս. Յարութեան դրան մօտ անոյխաշ սիւն ին և այլ աւանդութեանց մէկ տարբերակը կը կարգանք Սիմէոն զպիր Լեհացիին ուղեգրութեան (1608-1619) մէջ. 1617ի Ջատիկին սոյն ուղեգիրը Երուսաղէմ կը գտնուի և կը պատմէ թէ ճրագալուցին օրը բոլոր ուխտաւորները մուտքի տուրքով մը Ս. Յարութիւն կը մտնեն Ս. Կերեղմանէն բզլսած լոյսը տեսնելու համար. բայց աղքատները նոյն տուրքը չի կրնալով վճարել դուրս կը մնան, հակառակ իրենց աղաչանքներուն: Այս յիշատակութեան առթիւ յիշեալը մէջ կը բերէ հնագոյն աւանդութիւն մը, որ է հետեւեալը և զօր կ'ընդօրինակենք իր խօսքերով. «Եւ ասնն թէ ժամանակ մի այդպէս Փախիր Փուխարայնի մնացել են ի դուրս, չէ թողած պէնկզար գրամով, թէ թամամ տուէք. եւ նոքա այնպէս մնացել են մահրում. և յորժամ լոյսը